



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
Ե. ԹՈՐՈՍԵԱՆ
 ՆԱԽԸՆԿՈՒՄ ՈՐ ԵՒ Ե ԳՐՈՒԹՅՈՒՆ
 ՊԵՏԵ Ե ՈՒՎԼԵՆ ԿՈՒ
 Խմբագր. ԱՐՇԱԿՈՅՍ ԲՈՒՐՄԻ
 ԳԱՅԻՐԷ (Հասպոսկի)

ԱՐՁԱՅԻՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
 ԵՄԵՏՈՍԻ ՀԱՄԱՐ
 Տարեկան, ողջ ղախկն. 60
 Վեցամսեայ » 35
 ՇՏԱՐ ԵՐԿՐԵՆԻ
 Տարեկան Ֆրանկ 20
 Վեցամսեայ » 12

Rédaction du journal arménien
ARCHALOUICE
 HABBANIEH LE CAIRE (Égypte)

Լ Ր Ա Ք Ի Ր

ԱՉԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒ ԿԱՆԵԿ Է
 ԵՒ ԹՂՔՍԱՐԻ ՅԱՄՔԸ
 Խմբագրութեան վրայ:
 Խմբագրութեան ուղղուած
 գրութիւնք եւ չէն տրուիր:

ԿՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ՈՎ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ

Հինգ տարին կը մտնենայ ահաւասիկ, որ Եգիպտոսի նման ամենակարեւոր թեմի մը առաջնորդական աթոռը բոլորովին թափուր մնացած է, ձեռնհաս, ժողովրդասէր և վարչազէտ առաջնորդի մը ընտրութիւնը օրինաւորապէս չ'կատարուելուն պատճառաւ:

Կարգ մը Տիտղոսաւորներու ալ ամենէն շատ փափաքած կամ լուս է ըսել, փնտռած ու չ'գտած բանն է:

Ասոնցմէ ոմանք Առաջնորդարանն ու Եկեղեցին, Վարժարանն ու պաշտօնեաներն բանկայն ու արողները, կալուածներն ու մատակարարութիւնը պարզապէս իրենց սեփականութիւնը համարած են՝ և միայն իրենց քմահաճոյքներուն յարմարած եղանակաւ կ'առնեն ու կուտան, կը շինեն ու կը քակեն, կ'արձակեն ու կը կրակեն, որպէս թէ ազգային այս հաստատութիւնները իրենց ձեռքին մէջ խաղալիկ մը կամ մենաշնորհի առարկայ մը եղած ըլլար:

Սահմանադրութիւնը հոս ծրարուած ու մէկ կողմ դրուած է, թէև ամեն որոշում ըստ Սահմանադրութեան տրուած ըլլալու համոզումը կայ ոմանց մտքին մէջ. և այդպիսինքն ընտանքներուն նայելով, ի՞նչ պէտքը կայ Սահմանադրութեան օրէնքներուն, ո՞չ ապաքէն եթէ պէտքը զգացուի օրէնքի մը, կրնան անմիջապէս հաս մը գրել ու դորժագրութեան գնել. բաւական է որ իրենց քմահաճոյքի համապատասխան եղած ըլլայ այն: Բուն իսկ այս պատճառներով է որ մինչև ց'արդ Սահմանադրութիւնը առ նուազն 10 անգամ զգեստ փոխած է Եգիպտական ազատ կրիմային տակ և հիմակ անճանաչելի վիճակի մը մատնուած:

Ինչո՞ւ այս ամենը. այս հարցին պատասխանը գտնել շատ դիւրին պիտի ըլլայ: Հաստատամիտ ու մանաւանդ կորովամիտ առաջնորդի մը պակասութիւնն է: Նա' միայն կարող պիտի ըլլար սանձարձակ օրէնսդէտները ի կարգ հրաւիրել և ի հարկին այդպիսիները հեռի պահել ազգային գործերու միջամտելէ, ինչպէս Ամեն. Իզմիրլեան երբեմն Եգիպտոսի Առաջնորդութեան օրովը իր ներկայութենէն վաճառած է Տիտղոսաւոր մը, որը այնչափ վստահութիւն ներշնչած չէ՝ եղեր իրեն:

Անցեալ 98 տարուայ ապրիլ ամսուն մէջ, երկուշաբթի օր մը, մեր Օրէնսդէտ Պատկ.

Երեսի. ժողովը առատաձեռնութեան օրինակ մը ընծայելու նպատակաւ, գրչի մէկ հարուածով երկու առաջնորդ մեկէն ընտրեց: — Ամեն. Իզմիրլեանը և Եհեսէկ մը:

Եգիպտոսի հայ ժողովուրդը սրչափ որ ալ Սահմանադրութեան օրինաց հակառակ գտաւ կատարուած ընտրութիւնները, սակայն իրաւամբ յարգել ուղեով Ամեն. Իզմիրլեանը, և իրեն բարձր արժանիքը, Գահիրէէն և Ազէքսանդրիայէն մտաւորապէս 1000 ստորագրութիւններ պարունակող երկու հանրագրերով նուիրագործեց Անոր ընտրութիւնը. (եթէ այսպէս ընդունիլ կարելի է):

Ի՞նչ օգուտ սակայն, որ մինչև ց'արդ անհետեանք մնաց ընտրութիւնն ու ներկայացուած հանրագրութիւններն և Եգիպտոսի Առաջնորդական աթոռը ց'այսօր ո՞չ միայն թափուր մնաց, այլ և անճարակութեան ու կեղծիքի մարմնացումներու եւ ապիկարութեան տիպարներու ձեռքին մէջ խաղալիկ դարձաւ: Իսկ այս ամենուն հետեւանքը ահաւասիկ վերջին անխորժ գեղքերը, որոնց եզրակացութիւնը ուր յանդիւր թէպէտեւ անորոշ է, սակայն առոնց մէջ գտնէ որոշուեցաւ թէ՛ որո՞նք են ազգասիրութեան դիմակին տակ ազգը կործանելու և մատնելու շանացողները:

Հոս տեղն է քանի մը խօսք ալ վերու յիշեալ հանրագրերու մասին ընել:

Ներքի պիտի ըլլայ արդեօք էրը մը մտածենք թէ Ամեն. Իզմիրլեանը Եգիպտոսի առաջնորդական գահուն վրայ բազմած տեսնելու ցանկութեամբ Եգիպտոսայցի հանրագրութեան միջոցաւ յայտնած փափաքը, աւելի անոր ընտրութիւնը բեկանելու նպատակաւ սարքուած էր, քան թէ վաւերացնելու:

Այս պարագան պէտք է բացատրին մեզ Գահիրէի մէջ հանրագիրը պատրաստելու նախաձեռնարկ եղողներն, որովհետև այդ ձեռնարկին վերաբերող բոլոր ներքին մեքենայութեանց և դիւանագիտական խաղերուն իրենք մտէն ծանօթացած և գիտակ պէտք է ըլլան. Արդեօք կրնա՞ն որոշապէս ըսել մեզ թէ հանրագիրը պատրաստելու գաղափարը ո՞վ ներշնչեց իրենց, և թէ կարելի՞ էր որ իրենց այդ ներշնչումը ընդունելու ալ ուրիշ դէմք մը ծածկուած ըլլար: Ի՞նչ կը նշանակէր հանրագրին պարունակած սա պարբերութիւնը « Մենք Իզմիրլեանը կողմէնք. բայց եթէ քաղաքական հակադրութիւններ չեն քոչասեր այժմ, մենք ստորագրեալս կ'պսակնենք!!! » (մինչև

երբը յայտնի չէր.) ու այս իմաստով խրմբագրուած հանրագիրներէն մին՝ պիտի զրկուէր Պատրիարքարան. մին՝ Տատեան Աթիին փաշային և միւսն ալ այստեղ Տիգրան փաշային պիտի մատուցուէր:

Իզմիրլեանի ընտրութիւնը բեկանելու և Պատրիարքարանը երկու սուրբին մէջտեղէն ազատելու գործիքը դարձած հանրագիրը պատրաստողները՝ որոնց ստորագրութիւնը անեղծ կը մնայ եղեր ամեն տեղ, դիտութեամբ թէ անպիտութեամբ ըրին այս մնասակար ձեռնարկը, թո՛ղ մեզի բերանացի կամ գրաւոր բացատրութիւն տան, քանի որ հայ ժողովուրդին վստահութիւնը չարաչար գործածեցին, իրենց անխոհեմութեամբ անոր սիրած առաջնորդին ընտրութիւնը բեկանելու պատճառ դառնալով:

Ահա Փաշան վերադարձաւ և թերևս նոր առաջնորդի մը ընտրութեան ձեռնարկուի և ինչպէս կը ըսենք, նոր առաջնորդացունքու ցուցակ մ'ալ կը պատրաստուի եղեր: Շատ հաւանական է թէ « Փաշան ըսաւ » ով Առաջնորդի մը կամ երկուքի ընտրութիւնը կը կատարէ մեր Պատ. Երես. ժողովը, որուն չորս անդամները պակաս են, երկուքը մեռած, երկուքը հրաժարած:

Բնական է թէ առաջնորդի ընտրութիւնը կատարելէ առաջ բոլոր թերին և սերի թերիներ կը լրացուին մեր ժողովականաց կողմէ: Իսկ վեղարաւոր մը Գահիրէ հրաւիրելէ առաջ գրեթէ անհրաժեշտ է որ ժողովուրդին միտքը հասկնալու ջանքերը չ'մոռցուին, որովհետև Առաջնորդը պարզապէս ժողովուրդին համար է:

Գալով ժողովուրդին, փոխանակ սպասելու որ ընտրուած առաջնորդը դայ ու յետոյ անոր մասին իր ուղեւոր և չ'ուղեւոր կարծիքը յայտնէ, պէտք է այժմէն իրեն համար ընտրելի առաջնորդին նկատմամբ լուրջ խորհրդակցութիւններ և համախոհութիւններ կատարէ, հաստատապէս որոշելու համար թէ երբն Առաջնորդողը ո՞վ պիտի ըլլայ:

Ե. ԹՈՐՈՍԵԱՆ

ՉԵԶՈՔ ՄԱՐԴԸ

Չեզո՞ք մարդ, ի՞նչ կ'ըսես, հիմա կա՞յ ատանկ բան:
 Այո՞, կայ, կ'ըլլայ ու եղած է:
 Բայց, ա՛խ, ո՞ւր գտնեմ ես զայն հիմա՞

գէթ իր իսկ ներշնչումով նկարագրելու համար
վրնքը. ո՞ւր գտնենք, մանաւանդ հասարակային
այս ներգործող տաքին մէջ: Վասն զի չեզոք
մարդը անծանօթ կ'ապրի, չներգործեր՝ բայց միայն
ծածուկ:

Չքնաղ է այն ճշմարտութեան նման:
Մէկ հատիկ է ան՝ Հայր-Աղամին իյնալէն
ի վեր:

Եւ կ'ապրի զեռ՝ տեսակ մը մարմնափոխու-
թեամբ, աշխարհի սկիզբէն ի վեր մարդէ մարդ
անցնելով:

Եւ իրեն համար, իրեն համար միայն ամէն
տեղ, ամեն ժամանակ՝ սեւը սեւ, ճերմակը ճերմակ,
երկու անգամ երկուքը չորս են:

Փոկիտն, Դեմոսթենէս, Կիկերոն, Կլատսթըն
անգամ յովտ մը չեն կշար չեզոք մարդուն հան-
գէպ՝ իրենց բովանդակ ճշմարտամասնութիւննե-
րովը:

Գիտուն է ան՝ առանց ունենալու մեր դա-
սակարգեալ գիտութիւնը: Անաչառ դատաստանա-
բան մըն է իր խղճի ատենը, յորմէ կը սարսին
աշխարհի ատենները:

Քիչ եւ ծածուկ կը խօսի ան բայց քաղաղի
նման հաւատարիմ կազմէ այդուն պահը:

Հարուստ, աղքատ, պաշտօնակալ, անպաշտօն,
այր, կին, Սաւուղ եւ Դաւիթ՝ չխտրեր ան: Իրեն
համար երկու կէտերու մէջ՝ միշտ ուղիղ գիծն է
կարճ ու ճիշդ ճամբան:

Թայլոյն մէջ, Փարոսին մէջ՝ հաւասարապէս
նոյն է ինք. երկուքին ալ պատիւ: Հո՞ն ալ հո՞ն
ալ կըսէ քեզի կարճ ու անպատրուակ « Թէ Եգիպտոս
տոս գնաս, մալիէ կայ հոն՝ բայց միայն մի սպա-
նաներ »: « Թէ Պոլիս երթաս՝ մի սուտ վկայեր »:
« Թէ Լոնտոն՝ մի՛ գողանար »: « Թէ Փոքր Ասիա՝
սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն քո »:

Իրեն համար Աստուած է միայն անսխալ,
արեւելքն է միշտ առաւօտեան դուռը եւ սիրան
է միայն ճարտարխօսութեան վառարանը:

Կախիչոսին անգամ չ'հաւատար ինք՝ երբ ըսէ
թէ աշխարհ կը դառնայ. նախ իր աչքովը կը
փորձէ, ապա կը քրքրէ հին պատմութիւններն ալ:
Թերեւս Կախիչէն առաջ Թաղէս ըրած է այդ
գիւտը. Թերեւս Թաղէսէն առաջ Եգիպտացի հին
քուրմերը կամ անոնց վարժապետ Ասորեստանցիք
ու Հնդկիք. եւ կամ Թերեւս անոնց ամենուն
վարժապետ ու հայր՝ ինք Աղամ ալ գիտէր զայդ:
Վասն զի՝ իրեն համար Աղամ ալ աչք ունէր, մարդ
էր. մանաւանդ իբրեւ նախամարդ՝ ունէր ամենէն
բանուկ աչքն ու ամենէն պայծառատես ու կոյս
միտքը:

Այսպէս՝ գիտուն հոգետես մըն ալ է չեզոք
մարդը:

Չխտրեր ազգ, կրօնք, հին, նոր, անխտր
կսպասարկէ ճշմարտութեան:

Մարգարէ է ան. Սերելլայ է Աղամանդի կա-
մուրջէն մինչեւ Լեւոն Արարատ, Սինայէն մինչեւ
Գողգոթա նշանակած է իր հանգրուանները:

Պոլիսէն Հոովմ, Եգիպտոսէն Հնդկաստան՝
միշտ ամեն տեղ նոյն թելը կը զարնէ՝ առանց
տաղտուկ պատճառելու, միթէ յաւիտենական ու
միշտ նոյն արեւը որ մը տաղտուկ պատճառած է
մարդկութեան:

Կարգա՛ ու կարգա՛ զայն իր լուծութեան մէջ,
ու չես կշտանար, այլ կը հրաշմանա միշտ, իր
պարզութիւնը յաւիտենական հրաշք մըն է՝ ան-
նմանելի անխափանելի:

Անոր համար՝ մարդը միշտ բանական կենդանի
մըն է. սուտն երկրի վրայ ահագին սխալ մըն է՝
ճշմարտութեան դաւող. աշխարհ աստուածային
հսկայ մեքենայ մ'է ու երկինք՝ կշիռ մը ճշգրտա-
հատոյց:

Կ'զգաս որ բոլորակ ու անհասնում հոգի մը
կայ չեզոք արարածին ներքը, որ ամեն հոգիներու
հետ ալ՝ յաճախ մէկ երկու բառով՝ անխտր ու
անհասարար կը խօսի փայլահամարան:

Գեղջուկ օրինակով մը վերջացունեմ չեզոք
մարդուն նկարագիրը:

Երկու հոգի վէճ մը ունին, կը կռուին, մէջ
կը մտնէ չեզոք մարդը. եւ երկու կողմին ալ
իրաւունք կուտայ: Ականատես երրորդ մը կը
բողոքէ երկու հակառակ կողմերուն ալ իրաւունք
հանելուն համար. մեր չեզոքը կը դառնայ անոր.
« Դո՛ւն ալ իրանոնք ունին » կըսէ: Եւ ինք ալ՝

հոն իրաւունքէ աւելի բան մը ունի. ճշմարտու-
թիւնն ինք:

Ճշմարտութիւնը չեզոք է, այլ ուր գտնենք
ճշմարտ մարդը, չեզոքը եւ գտած օրերնիս՝ մերը
պիտի կարծենք, մինչդեռ ամէնուն ալ է ինք:

Փնտռեցէ՛ք ու գտէք զայն, ընթերցողք իմ,
այլ մի կարծէք որ բոլորովին ձերն է ան:

Աշխարհ խնդ կըսէ ճշմարտախօս ու չեզոք
մարդուն, եւ յիշուի՛, չեզոք մարդը խնդն է:

Բայց խնդերն են որ շինած են մեր իմաս-
տուններուն աշխարհն ալ:

Աղէքանդրիա Թ. Մ.

ԵՆՈՒՊԱԿԱՆ ԹՂԹԱԲԵՐ

Բարիկ 27 Հոկտ. 99

ԱՓՐԻԿԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Պատերազմի սկսելէն առաջ անգլիա-
կան թերթերէն շատերն Պօէրներու վրայօք
բացարձակ արհամարհանօք կը խօսէին, այդ-
կոչտ, խորամանկ և կեղծաւոր գիւղացիներն
համակրութեան արժանի չէին:

Այսօր որ վառօթն խօսած է, ձայնը
փոխուած է, Պօէրներն կատարեալ ճէնթըլ-
մէններու պէս կը վարուին, եղբայրսիրու-
թեամբ կը խնամեն վիրաւորեալներն և
սիրալիր ընդունելութիւն մը կընեն այն
անգլիացի կանանց, որոնք Թրանսվալ կու-
գան իրենց էրկան գերի բռնուիլն լսելով:

Այո՛, Պօէրներն եռանդուն, բարոյական
արժանիքով, աշնիւ ժողովուրդ մ'են, և
մեծ սխալ պիտի լինէր կարծել թէ Անգլիա
պատերազմ կ'ընէ Պօէրներու հետ ! !

Ինդիը պարզ է, Անգլիա միայն մէկ
փափաք ունի, Պօէրներն իրենց ճնշողներէն,
Ենթրիկ լարողներէն, անհաւատ և անօրէն
մարդիկներէ, ստոր բաղդախնդիրներէ,
դրամի մարդիկներէ ազատել, որոնք կա-
ռավարութեան թրեթրոխայի մէջ կը գըտ-
նուին ! :

Ինդիը միայն այդ անձանց ճամբայ
տալն, և անման Չէմպրէյնի օգնական՝ Մէսիլ
Ռօտտի և Ճէյմսընի միջոց տալ Թրանսվալը
և Ազատ Պետութիւնն կառավարելու ի
նպատ Մեծն Բրիտանիոյ քաղաքական և
Քիմանաական շահերուն ! !

Ահա այս վայրկեան անգլիական մա-
մուլին նոր ուղղութիւնը:

Անօգուտ է այս ստորնութեանց վրայ
կանգ առնելն: Նա բարոյական զգացման
բացակայութիւնը կը յայտնէ:

Այժմէն Անգլիա իւր գգուշութիւնները
ձեռք կառնու ո՛ր և է տեղատուութեան
ժամանակի համար, որպէս զի կարենայ այն
ատեն ինքզինքն արդարացնել և քրիստո-
նէականեղբայրսիրութիւնն իրեն օգնութեան
կանչել: Եթէ Եւրոպայի մէջ միայն մէկ
կառավարութիւն լինէր որ ուղել գիտնար,
ի՞նչ չուտափոյթ պիտի լինէր Անգլիոյ տե-
ղատութիւնն:

ԱՆԳՂԱՅԻՔ ԵՒ ԲԱՍՈՒԹՆԵՐԸ

Անգլիացիք որ միշտ քաղաքակրթու-
թեան շահերուն վրայ կը խօսին և անով
չատ կ'ղբաղին և որք յաւակնութիւն ունին
պնդելու թէ Թրանսվալի մէջ պատերազմ

կընէին այնտեղի ճերմակներուն հաւասա-
րութիւն սորվեցնելու, մարդկութեան դէմ
նոր ոճիր մը կը գործեն, տեղացի Բասութ-
ներն Պօէրներու դէմ զինելով:

Այս ցնղը դեռ բարբարոսութեան մէջ
կը գտնուի և իրենց եռանդին մէջ վայրե-
նական զգացումները տակաւին անայլայլ
մնացած են: Ի՞նչ բարբարոսութիւններ
չեն կընար գործել այդ վայրենիները երբ
իրենց ձեռաց մէջ կատարելագործուած
զէնքեր տեսնեն. մանաւանդ երբ զգան թէ
Անգլիոյ պաշտպանութեան տակ ե՛ն: Անգ-
լիացիք շատ լաւ գիտեն թէ իրենց ըրածն
ստորնութիւն է, վայրենի ցեղ մը Եւրոպա-
կան ժողովուրդի մը դէմ զինելով, սակայն
այդ իրենց փոյթը չէ, բաւական է որ իրենց
նպատակին հասնին:

Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ ԵՒ ՓԱՐԻ ՆՈՒՎԷԼ

« Փարի Նուվէլի » Տիրէթթօրները և
աշխատակիցները իրենց համար պարտք կը
համարին հայոց տոհմային գրականութեան
և դաստիարակութեան բազմամեայ անխնջ
մշակին՝ Պ. ՄԱՏԹԷՍՍ ՄԱՄՈՒՐԵԱՆԻ Յորեւ-
եանի առթիւ խնդակցիլ ընդհանուր հայու-
թեան ուրախութեամբ: Դեռ երկար կեանք
կը մաղթեն ծերունազարդ գրագէտին և
չերմագին ազերսներ կուղղեն և Ռարձրեալն
որ Մամուրեաններու նման շատեր պարգևէ
հայոց ազգին, անոր գրականութեան, գի-
տութեան և արուեստի զարգացման համար:

A. S. և Մ. Ս. ԴԱՒԻԹ-ԲԷԿ

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Գահիրէի Ս. Աստուածածին Եկեղեցին
այս կիրակի ալ պատիւ ունեցաւ վայելելու
ներկայութիւնը, Արմենիա ի ճշմարտախօս
թղթակցին ըսածներուն նայելով, երթ ստոյգ
է, Քրիստոսն ԱՅ փոյսներու:

Արմենիայի Պատ. Խմբագրութեան Գա-
հիրէի թղթակցին գնահատելի արժանիքը
ի վեր հանելու և Պատ. Տնօրէն Խմբագիրն
ալ, որովհետեւ Գահիրէէն հեռի կը գտնուի
քիչ մը լուսաբանելու համար, բաւական է
կարծենք՝ երբ ըսենք թէ, ո՛չ միայն փո-
լիսներուն շատերը քրիստոնէայ չեն, որով-
հետեւ Սալիէ և ըն քրիստոնէայ մկրտութեան
անուններու ցանկին մէջ մինչև ցարդ չեն
հանդիպած մեզ և թերեւ Արմենիա ի քան-
գէճ թղթակցին ալ, այլ և նախորդ Առաջ-
նորդական տեղապահ Յակոբ Եպիսկոպոսի,
այժմու՝ առաջնորդական փոխ. տեղապահի
պաշտօնին գլխովին անարժան և ազէտ քա-
հանային, Առաջնորդարանի գիւտնադպիր-
ներուն ու աւելածուին և քանի մը իրազեկ
ու պարկեշտ անձերու ըսածներուն նայելով,
հրաժարեցուցեալ Գարապետի պաշտօնին
կոչուած երաժիշտ դասատուն ալ մնանե-
սակաւնոքիւնը ընդունած է Ի վեր:

Եկեղեցւոյ և Վարժարանի կրկին հո-
գաբարձութիւնք և կղերականները Քաղա-
քական ժողովին հետ միացած, այս տնօրի-
նութիւնը ըրած են, Եկեղեցական Լուրա-

Հ Ե Ռ Ա Պ Ի Ր

ՀԱՎԱՍԻ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԵՆԷՆ

Հոտով 7 նոյ. — Իտալիա վերահաստատած է եզրագրութեան եկող շողենաներու մասին առողջապահական միջոցները:

Պերդին 7 նոյ. — Չարը ու Չարուհին վաղը չորեքշաբթի այցելութիւն մը պիտի տան Վիլհելմ կայսեր:

Կը պնդեն թէ Ֆրանսայի և Ռուսիոյ կողմանէ թրանսպիր գործերու մասին Գերմանիոյ եղած միջամտութեան առաջարկը մերժուած է այս վերջնոյն կողմանէ: Այս լուրը սխալ է. Գաղղիա և Ռուսիա այս իմաստով ո և է առաջարկ մը ըրած չեն:

Բարիզ, 6 նոյ. — «Թան» ի ըսածին նայելով Լէյպտիցի Միգրիական բանակին բոլոր պաշարը գրեթէ սպառած է:

Լոնտոն, 6 նոյ. — Պէտտերլիի Անգլիական յաղթութիւնը կատարուած չէ:

Թ Ղ Թ Ա Կ Յ Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Գահիրէ, 1 նոյեմբ. 99

... Խմբագիր.

Փիւնիկի 15 հոկտեմբեր, 14 թղ թուոյն մէջ «Աչք-կապուք չխաղանք» խորագրով և «Ապահ» ստորագրութեամբ զրպարտանքներու հաւաքածոյ մը կարգադր, որուն պարունակութիւնը 'ի հարկէ հանդէսին ընթերցողաց ուշադրութեանն չէ՛ վրեպած:

Որքան ծիծաղելի այնքան տխուր երեւոյթ մ'է երբ կը տեսնենք թէ վերջերս «յիշուի չիշուի» ի խնդրոյ մէջ ուրիշներէ թելադրուած հակառակորդի գերեր ստանձնող կարգ մը էնթրիկաններ ինքզինքնին արգարացնելու զիտու մով, պարտաւորութիւն կողման խել մը տափակ ու հակասութիւններով ի գրութիւններով հրապարակը ուղղել իբր թէ հանրային կարծիքը ուղղելու համոզումով: Ասոնցմէ ոմանք ղէպքերը Մօլիէրի կերպով ներբողեցին, ոմանք ալ «յիշուի» ի հարցը զիւանապիտական սեղանին վրայ զբաժ՝ Մարիավերական իմաստասիրութիւններով ուղեցին ինքզինքնին արգարացնել:

Է՛հ ի՞նչ ընենք, «յիշուի» ի սօս մօտաւ ալ այս պիտի ըլլայ եղեր:

Նպատակս Պ. Ապահի գրախօսութիւններուն պատասխանել չէ՛, այլ ղէպքերու և իրողութիւններու ազդեցութեան տակ յիշելին խաղացած սգեղ գերը պարզել, քանի որ արդէն ժողովուրդը այս վերջինը բաւական ուսումնասիրած է: Բարեպատեն զուգարկութիւնը որ այժմ կը ներկայանայ մեզ, կ'արժէ ուրեմն ներկայ առիթէն օգտուելով հրապարակաւ մի քիչ զբաղուիլ այդ ողջամիտ պարոնին և իր համախոհներուն հետ: Չանրագրութիւնը, ստորագրելէ առաջ՝ երբ «յիշուի» ի խնդրոյ մասին երեք ընկերներ ղիմում ըրինք Բաղաքական ժողովի երկու անդամոց, անոնց հաւանութիւնը առած լաւ տպաւորութեան մը տակ մեկնեցանք, քանի որ իրենք բարի տրամադրութիւններ ցոյց տալով՝ գործը զիւրացուցին, առաջարկելով միայն՝ զէթ 200 ստորագրութեամբ հանրագրութիւն մը պատրաստել (1):

Որքան զարմանալի թուեցաւ մեզ, երբ տեսնեցինք թէ պատրաստուած հանրագիրը Բաղաք.

(1) Կը տեղեկանանք թէ Բաղաք. ժողովը ձեռքէ առաջ հանրագրի ձեռնարկը ընել տալ սկսած էր, Առաջ. Փ. Տեղապահի վարձեալ արբանեակներէն մէկ երկուքին միջոցաւ. այս պարագային ձեռք ըրածը «Կոչիկովը քսնիւր իջնալ» պիտի նշանակէր:

ժողովոյ ներկայացուելէ յետոյ ժողովի հրաւիրուած ներսի. ժողովոյ Առեւտրային անդամն խիստ վատ վերաբերում մը ունեցաւ պատգամաւորացս հետ. ու անկէ գատ ալ առաջարկուեցաւ մեզ, մինչև 15 օր համբերելով ժողովուրդը համոզել, որպէս զի « իշխանք ժողովին ի միասին վասն ոչինչ առնելոյ »:

Ահա ճիշդ այդ պարագային ժողովոյ Նախագահէն խօսք ուղեւով հետեւեալ պատասխանը տուին « Պէտք է դիտարկ թէ Տեղաք, մենք արդէն 3-4 շաբաթներէ ի վեր է որ ժողովուրդի տաք գլուխ դասակարգը կը համոզենք, (2) որպէս զի որ և է անկարգութիւն տեղի չունենայ. հետեւաբար այսօր մենք մեր պատասխանատուութիւնը այս սենեկին մէջ կը թողունք և կը հեռանանք. այլ ևս կարելի չէ զսպել. քանի որ այս հանրագիրն ստորագրողներուն գրեթէ մեծամասնութիւնը գուհիկ դասակարգի պատկանող տաք գլուխ երիտասարդներ են »:

Պ. Ապահ որ տեղույս մենձ ազաներէն կախում ունէր, քանի որ անոնց շնորհիւ գործի մը անցած էր պաշտօնատան մը մէջ, և որոնք կարող էին վարկէնապէս զինքը իւր պաշտօնէն հրաժարեցնել հետեւաբար վախճալով իրեն պապագային ըլլալը որ և է սպառնալիքէն խոհեմութիւն կը համարէ իր ստորագրութիւնը եւ առնուլ, առանց թուղթին վրայէն միբատով կտրել հանելու. ինչպէս որ ինքը ըմբռնելով իր մասին եղած սարաձայնութիւնը կուզէ հերքել:

Եւ որովհետեւ ինքը այդ կէտը շատ լաւ կ'զգար թէ, իր ստորագրութիւնը յետս պահանջած ըլլալը ստեղծելի վատութիւն մը կը համարուի, հետեւաբար ինքզինքը արգարացնել պէտք էր. ուրեմն ասոր անոր ճակտին մուր քսնելու և խել մը սուտերով իմ և ուրիշներու ըսածները խելագրութիւնը համար գատ հակառակամարտ կուսակցութիւն մը կը կազմէ, որուն ծրագիրը կ'ըլլայ հրապարակի վրայ սուտ զրոյցներ սարքել ըսելով թէ՛ « չիշուի » ի խնդրը լոկ կուսակցական է, ո՛չ թէ ժողովուրդական, և որուն համար արդէն ինքը հեռացած է եւայլն:

Ուստի Արիտի սաներէն մի քանի պարզամտներ հաւաքելով՝ հրոսակային խումբ մը կը կազմէ և կսկսի « չիշուի » համակիրները հալածել միշտ համախորհուրդ Ազգ. իշխանութեան վարիչ մարմնոյ մի քանի անդամներուն հետ: Ինչպէս կը տեսնանք, երբ անձնակազմ շահը գործին մէջ կը մտնէ, ընտանիք և արգարութեան քմրքն-նու մները կը խելագրութիւնը. ուրեմն տեղն է ըսել թէ, Պ. Ապահ և իւր ափ մը արբանեակները, երբ իրենց անձնական գնում շահերը, ընդհանուրի շահերուն առջև չ'են ուղեր զոհել. ակներեւ է թէ ամեն միջոցներու պէտք էր ղի մէին ժողովուրդի ազնուագոյն նպատակը և արգար ձայնը ընդ միշտ ոչնչացնելու և խափանելու ջանալ:

Արդ, կուսակցական ոգին չէ՛ որ արմատ թողած է « չիշուի » ի խնդրոյ մէջ — ինչպէս Փիւնիկ կուզէ ըմբռնել — այլ լոկ շահախախտական ոգին է որմէ վարակուողները ցաւալի է ըսել թէ գրեթէ բոլորն ալ անարժան և իրենց կոչումին չ'համապատասխանող տմարգի արարածներ են:

'Ի մի բան Արիտի սաներն էին որ համակիր պելով Պ. Ապահի, թեւ ու թիկուք ունենալով մենձ ազաները կուզեն ժողովուրդի միամտութիւնը ու զիւրահաւատութիւնը շահագործելով, հասարակութեան արդար ձայնը իրենց շահամոլութեան պրկումներուն տակ խելագրածն ընել:

Իսկ զալով Պ. Ապահի իմ մասին ըրած անհիմն ատարկութիւններուն՝ այդ ալ բոլորովին կարեւորութենէ զուրկ ըլլալով, չ'արժար որ Արեւոյս ի սիւները գոհուին ատոնցմով զբաղելով (3):

Խնդիրը բոլորովին փակուած համարելով կը սիրեմ յուսալ թէ Պ. Ապահ իւր այս նոր ասպարէզին մէջ զարգանալով օր մը 1999 ի ստախուտութեան համաշխարհային մեծ կաճաթին անդամ կարգուի:

ԵՐՈՒԱՆԻ Յ. ՔԷՐԷՍԷՆՆԵԱՆ

(2) Ո՞վ իշխանութիւն տուած էր Ձեզ ժողովուրդը համոզելու համար:

(3) Արդէն պատշաճ էր որ ներկայ պատասխանն ալ Փիւնիկ ին զըրկուէր:

պէտական կարգ ու արտի տեղը բերելու համար: Հրաշալի՜ գիւտ . . .

Այլ ևս հարկ չ'մնար ուրեմն, Արմենիա ի թղթակցին միւս ըսածներուն ստուիիւնները ի վեր հանել, որովհետեւ մենք քաջ գիտենք թէ անոնք քանի մը մանդրի փոխարէն և քառասուն վարպէտորդի ներու սրբագրութիւններէն անցած սուտ ու սխալ գրութիւններ են:

Եթէ Արմենիա Պատ. Խմբագրութիւնը Գահիրէէն լուրջ և անկողմնակալ թղթակցի մը կամ թղթակիցներու պէտք ունի, Արշաղոյս ի Խմբագրութիւնը կը խոստանայ վստահելի անձեր ներկայացնել իրեն և ոչ թէ առաւ փախաւ ներ, որպէս զի Արմենիա Վսամայ գոյութեան իրաւունքին և ուղղամտութեան վրայ կասկածելու տեղիք չ'մնայ:

Մեր ծրագրէն ու նպատակէն դուրս է անօգուտ վէճերու բռնուիլ: Հետեւաբար «Արժուոնի» պատուական անունին տակ մտած իւրապոյ ներուն կը թողունք, քանի մը փարայի փոխարէն ինքզինքնին ծախելու ցածութիւնը ունենալու արհեստը:

Այս առթիւ գտնէ իրաւունք ունէինք յուսալով թէ Արմենիա Պատ. Խմբագրութիւնը կը հաճէր իրեն զրկուած թերթերէն դատել, թէ Արշաղոյս՝ եղած լուրերը միայն հրատարակած է և ի հարկին չափաւոր սահմանի մէջ պաշտպանած է գատ մը, որ ժողովուրդին կը պատկանէր և ոչ թէ ո՛ր և է կուսակցութեան:

Մենք մեր ձեռքը գտնուած շատ մը ապացոյցներով կրնանք հաստատել այդ իրողութիւնը. եթէ նոյն խել շատերու գործին չ'գայ մեր այս ձեռնարկը և ոմանք ալ այժմէն . . . խնդիր սկսի:

Ա. Զ. Պ.

Կը խնդրուի խմբ. արդոյ ազգայիններէն որ բարեհաճին ազգասիրաբար ծանուցանել խմբագրութեանս, եթէ գիտեն տեղը կամ կը ձանձան Սեբաստայի Պ. Յարութիւն Կիրակոսեանը, որոյ ուր գտնուելու մասին Ամերիկայէն ազգային մը կը հարցնէ մեզ:

ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿԻ 5 ՆՈՅՆԵՄԲԵՐ 1899

Ա. Թիւ	7012	շահած է	Փրանք	1000
Բ. "	8011	"	"	200
Գ. "	5423	"	"	100
Դ. "	9045	"	"	50
Ե. "	2682	"	"	50

Հետեւեալը 25 ական ֆրանք կը շահին

3941	9784	8868	7989	3211	9284
7840	9527	9865	9843	8743	5281
5709	9658	6216	4938	4455	5977
3707	7755	4052	1142		

ԾԱՆՈԹ. — Այն շահող թիւերը որոց վիճակեալ պարգևներն ութը օրէն չեն գանձուիր, Ընկերութեան անտուկին սեփականութիւնը կը լինին:

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՆԱԻՈՐ ԴԱՍԵՐ
ՉԱՓԱՀԱՍՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

ՀԱՅ ԱՒԵՏԱՐ. ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՄԷՋ
Ի ՏԱՂՈՒՑՅԵՒ

Առաջիկայ նոյն մբեր ամսոյ 6էն սկսեալ
երեկոյները ժամը 7էն մինչև 9 1/2 պիտի
աւանդուին Անգղ. Իսղղ. Արաբերէն և Հա-
յերէն դասեր:

Դիմել առ Մ. Յ. ԳնԱճԵԱՆ Հիմնադիր-
Տնօրէն Հայ Աւետարանական վարժարանաց:

ՀԱՅՎԱԶԵԱՆ ՓՈՒՈ

Յոգօքի Պափ վաճառատան մօտերը, Կամե-էլ-Պեմարի
ճիւղ դիմացը

ԵԿԱՒՕՑ ԵՒ ԸՆԿ.

Պատիւ ունին յայտարարելու թէ, վերջերս
իրենց նոր բացած փոռին մէջ, անխորդախ ա-
վարէ կը պատրաստուի ԳԱՂՂԻԱԿԱՆ, ԱՆԳՂՐԱ-
ԿԱՆ, ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՅՈՒՆԱԿԱՆ հանգեր: Սուր-
ճի, թէյի և կաթի պարսիմաթներ, և այլն:
Եկաւօք և Ընկերութիւն մեծ ջանք և
հոգածութիւն պիտի ունենան իրենց դիմող բոլոր
յաճախորդներն ըստ ամենայնի գոհացնելու:

Յանձնարարութիւնք ամենայն ճշգրտութեամբ
և փութով կը կատարուին: 13-50

ՄԱՐՏԻՐՈՍ ՄԱՐԶՊԱՆԵԱՆ

ԼՈՒԱՅԱՐԱՐ ԵՒ ԱՐԴՈՒԿԻՅ

Իւր գործատեղին հաստատած է Ապ-
տինի պալատին ճիշդ դիմացի փողոցը, Շա-
րա-էլ-Պօսթան թիւ 7 տան մէջ:

Ամենէն դժուարահաճներն անդամ գո-
հացնելու պայմանաւ կ'արդուկէ շապիկներ
և այն ամեն զգեստեղէններն, որոց համար
արդուկի պէտքը կ'զգացուի:

Ասոնցմէ զատ ունի նաեւ լուացարա-
րութեան յատուկ ճիւղ մը, ուր՝ իրեն գի-
մող յաճախորդներուն ճերմակեղէններն
զատ զատ լուալու գովելի գրութիւնը հաս-
տատած է:

Յաճախորդներուն դիւրութիւն ընծա-
յելու նպատակաւ ճերմակեղէններն ինք
անձամբ պիտի առնէ տուներէն և պիտի
վերադարձունէ սրղելալ ժամանակին:

ԳԻՆԵՐԸ ՉԱՓԱՀՈՐ ԵՒ ԴԻՒՐԱՄԱՏՉԵԼԻ
8-8

ՏԻԿԻՆ ՄԱՐԻ ՊՕՂՈՍ

ՄԱՆԿԱԲԱՐՉ

Վկայեալ տղական կառավարութեան և
բժշկական վարժարանին

Իւր բնակութիւնը հաստատած է Ի Շարա
Ապտիւլ-Ապիզ, Ալի փաշա Շէրիֆի պարտիզին
դիմաց:

Երկար ժամանակ իւր արհեստին կիրարկու-
թեամբ ստացած փորձառութիւնը և տղական
կլիմայի պահանջներուն մասին ունեցած գիտակ-
ցութիւնը կարեւոր առաւելութիւններ են:

Իրեն դիմողները կատարելապէս գոհ պիտի
մնան: 16-24

ԼԵՒՈՆ ԿԻՒՄԻՏԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՅՆԵՐՈՒ

ՓՕՆՕԿՐԱՍ

Գ.Ա.ՆԻՐԷ, - Մուսի փողոց, - Գ.Ա.ՆԻՐԷ
Ս. Ե. Ս. Սեհնավիի վանառատան դիմաց

Վերջերս հաստատած իւր վաճառատան մէջ
կը գտնուի պատի և բօնօսլի ընտիր տե-
սակէ բանտիւններու մեծ մթերք:

ԴԻՄԵՑԷՒ ՀՈՆ և պիտի գտնէք ամէն ճա-
շակի յարմար զանազան տեսակ արանց և կա-
նանց ժամացոյցներ, աղամանղազարդ, ոսկի, աւ-
ճաք և նիքի:

Յրանսական և ամերիկեան ապրանց ամե-
նաընտիր տեսակներէն զարդեղէններ, շղթաներ,
օղեր, մասսաճիներ և այլն:

Ամէն տեսակ ժամացոյցներու նորոգութիւն
կը լինի, արհեստին կատարելագործութիւններուն
ծանօթ ժամագործի մը միջոցաւ:

ԳԻՆԵՐԸ ԽԻՍՏ ՉԱՓԱՀՈՐ
29-50

ՏՕՐԻՔՈՐ ԺՕՐԺ Փ. ԷՎԼԻԵԱՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՍՄԱՆԱԲՈՅԺ
Ապսին, Շարհ Բուպրի, թիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու և հա-
սակի յարմար ընտիր ապրանքներով կեղծ
ակուաներ:

Կը դադրեցնէ վայրկենապէս ակուայի ցա-
ւերը ամերիկեան նորագոյն մեթոտով իւր
պատրաստած դեղերով:

Կը բուժէ լինտերու և բերնի ամեն տե-
սակ հիւանդութիւններն:

Իր լեցուցած ակուաներուն սովորու-
թիւնն առ նուազն երկու տարուան համար
կ'երաշխաւորէ: 3 8-10

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԼԱԶԱՐԵԱՆ

ԱՊՏԻՆ ԿՈՇԿԱԿԱՐ ԱՊՏԻՆ
Տայրիէի Սանիյի ճիւղ դիմաց

Ամենաընտիր ապրանքներէ կը պատրաստէ
խիտ կոկիկ, հաստատուն և ճաշակաւոր կոշիկ-
ներ, արանց, կանանց և տղայոց համար:

Դիմողը չափաւոր և աժան:
Փորձ մը միայն կը բաւէ: 21-24

ՏՊԱՐԱՆ-ԿԱԶՄԱՏՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՄԱՏՈՒՆ

Ի Գ.Ա.ՆԻՐԷ
ՇԱՐԱ ՄՕՉԱՄԵՏ ԱԼԻ (ՀԱՊՊԱՆԻՅԷ)

Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆ պատիւ ունի յայտարարելու թէ, յետ այսու ամէն օր
առաւօտեան ժամը 7 էն մինչև երեկոյեան ժամը 8 ը, պիտի գտնուի իւր
Տպարանին մէջ և պիտի ընդունի ամէն լեզուէ սպագրական ամեն կարգի և
տեսակի յանձնարարութիւններ: Ինչպէս՝

Շրջաբերականներ, Մահագրեր, Հրաշիրագրեր, Այցեխարտեր, Յանկեր,
Գիրքեր, Տեղեկագրեր, Հաշուեցոյցներ, Կանոնագրեր, Տոմսեր, Բնկերութեանց և
վաճառականներու սպագրական ամեն պիտոյցներ:

Իւր սպարանին մէջ եղած նորանոր կարգադրութեանց շնորհիւ կը խոս-
տանայ յաճախորդները ըստ ամենայնի գոհացնել գործերու մաքրութեան,
ճշգրտագոյնութեան և գներու չափաւորութեան մէջ:

Նգիւտտոսի ու է քաղաքէն կամ գիւղէն եկած յանձնարարութիւնները
ամենայն խնամք և փութով կը կատարուին:

Տպագրութիւն Ս. Ա. ԴԱՐԲԻՆԵԱՆ

ԳՐԻԳՈՐ ՊԵՇԻՐԵԱՆ

ԿՈՇԿԱԿԱՐ
Պագար Մուսուր Թիւ 39

Պատիւ ունի ծանուցանել թէ, իւր խանութը
նարա Միւղլիյինէն փոխադրած է Ի Պագար Մու-
սուր: Յրանսական նորաձեւութեանց յար և նը-
ման կոշիկներ պատրաստելու մէջ իւր ունեցած
հմտութեամբ մինչև ցարդ գոհ ըրած է իրեն դի-
մող Պատ. յաճախորդներն:

Իւր դործածած ապրանքներու սովորու-
թիւնն երբէք տարակոյս չ'վերցնելու:

Իրեն եղած յանձնարարութիւնք ո՛չ միայն
չափաւոր գներով, այլ և փութով և մեծ խնա-
մով կը պատրաստուին:

Դիմեցէք, եթէ կ'ուզէք ճաշակաւոր հագնել
և կոշտերէ (նասր) ազատ մնալ: 24-24

Հ. ԱԶԱՏԵԱՆ

ՂՈՒՐԻԷ, ՎԷՔԱԼԷԹ-ԷԼ-ԱՍԱՊԻ ԿԻՑ

Կը ծախուի ընտիր տեսակէն մազի ներկ
(բատուրդ) սեւ, շագանակագոյն և ոսկեգոյն:
Սեւ ներկ շիշով վայրկենապէս սեւցնող:
Սոյն ներկերու տեսողութիւնը մէկ ու կէս
ամսուայ համար երաշխաւորեալ է:

ՀՐԱՇԱԼԻ ԶՈՒՐ ՄԸ

Հերթափութիւնը կը դադրեցնէ և մա-
ղբը կը ճոխացնէ: Նմանապէս ճաղատ (տաղ)
գլուխները մազ կը բերէ: 17 տարուան ճա-
ղատ գլուխներու վրայ փորձուած և հիա-
նալի արդիւնք տեսնուած է: Շիշը 8 զըշ-
ողջ (2 ֆրանք):

Ճերմկցնող ջուր շիշով, որը մարմնոյն
բնական սպիտակութիւն կուտայ առանց
զգացնելու: Եգիպտոսի մէջ միակը:

Ակուայի փոշի և ջուր. մին մաքուր և
ճերմակ, միւսը հիւանդութիւններէ զերծ
պահող և ամրացնող:

Թող փութան օգտուիլ այն անձինք՝ ու-
րոնց գլխու մաղբն սկսած են տակաւ առ
տակաւ թափել և օր մը ճաղատ ըլլալու
փոխանքին ենթարկուած են:

Կը գնենք, կը վաճառենք և կը փոխա-
նակենք բոլոր ազգաց գործածած նամա-
կազրոյշիկը: 4 1-8